

անոնց գալուն՝ որոշ պատարագամատոյց մը սահմանուած ըլլայ:

1634 32.3 (6 Մարտ): Կ'որոշուի թէ Մոլինի հայ քահանային գրուի՝ որ Յովհաննէս Պատրիարքին գրքերն Հռոմ ղրկէ. իսկ իրեն Հռոմ գալուն թոյլտուութիւն խնդրելու մասին որոշուի՝ երբ իրմէ նոր տեղեկութիւններ գան:

1634 61.46 (5 Յունիս): Կը ծանուցուի՝ թէ Յովհաննէս հայ Պատրիարքն Կ. Պոլսոյ, Ս. Մարիամ Եգիպտացի հոգին աւանդելէն յառաջ հրամայած է, որ հայերէն Աստուածաշունչ մը, զոր հնագոյն օրինակի մը վրայէն ինքն անձամբ ընդօրինակած եւ շքեղ զարդարած է, Ս. Զօրն Ուրբանոս Ը.ին տրուի, եւ ինքն յանուն Հայ ազգին կը խնդրէ, որ Ս. Քահանայապետը զայն տպագրել տայ: Ս. Քահանայապետն հրամայած է՝ որ նոյնն յանձնուի Վատիկանի գրապետին, որ գործին հետամուտ ըլլայ:

1634 120.10 (18 Սեպտ.): Ս. Ժողովը կը հրամայէ գրել D. Giustianiի թէ հանգուցեալ Յովհաննէս Պատրիարքին գրքերն ինչ եղան, որոնն հասցէին ղրկուեցան, եւ որոնն ձեռօք:

Ս. Մարիամ Եգիպտացի Եկեղեցւոյն ծախուց գրքին մէջ 1632 Յուլիս ամսէն սկսեալ կը յիշուին Յովհաննէս Պատրիարքին համար եղած ծախքեր: 1634 Մայ. 2ին կը նշանակուի D. Filippo Stanislao Bulgaroին վճարուած: